# «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ

Մենք իրականացրել ենք «Կոնվերս Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ «Բանկ») 1999 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունների աուդիտը:

## Բանկի ղեկավարության եւ աուդիտորների համապատասխան պարտավորությունները

Բանկի ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար: Մեր պատասխանատվությունն է կարծիք արտահայտել բանկի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ հիմք ընդունելով իրականացված աուդիտը:

## Եզրակացության հիմնավորումը

Մեր աուդիտն իրականացվել է միջազգային աուդիտորական չափանիշներին համապատասխան: Նշված չափանիշները պահանջում են աուդիտը ծրագրավորել ու իրականացնել այնպես, որ հիմնավորված համոզվածություն ձեռք բերվի ֆինանսական հաշվետվություններում էական սխալների բացակայության վերաբերյալ: Աուդիտն ընդգրկում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալներն ու համապատասխան ծանոթագրությունները հիմնավորող փաստերի ընտրանքային կարգով ստուգում: Աուդիտը նաեւ ընդգրկում է ղեկավարության կողմից կիրառված հաշվապահական սկզբունքների եւ տրված գնահատականների վերլուծությունն, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր գնահատականը: Մենք վստահ ենք, որ մեր կողմից իրականացված աուդիտը հիմնավորված ելակետ է ստորեւ բերվող եզրակացության համար:

## Եզրակացություն

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները ճշմարտացիորեն են արտացոլում Բանկի ֆինանսական դրությունը առ 31-ը դեկտեմբերի 1999 թ., նրա գործունեության արդյունքները եւ դրամական հոսքերը տարեվերջին եւ համապատասխանում են միջազգային հաշվապահական չափանիշներին:

*Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա ՓԲԸ · Արտոնագրված աուդիտորներ, Երեւան, 8 մարտի 2000 թ.*

### Հաշվեկշիռ
*առ 31 դեկտեմբերի 1999 թ.*

| | 1999թ. հազ. դրամ | 1998թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **Ակտիվներ** | | |
| Կանխիկ դրամական միջոցներ | 415,439 | 33,116 |
| Հաշիվներ Կենտրոնական բանկում | 576,426 | 363,271 |
| Պահանջներ այլ բանկերի նկատմամբ | 5,313,771 | 2,543,919 |
| Արժեթղթեր | 800,440 | 794,397 |
| Վարկեր հաճախորդներին | 3,313,751 | 1,032,285 |
| | 10,419,827 | 4,766,988 |
| Հիմնական միջոցներ | 285,303 | 276,572 |
| Հաշվարկված տոկոսներ եւ այլ ակտիվներ | 316,417 | 184,716 |
| **Ընդամենը ակտիվներ** | 11,021,547 | 5,228,276 |
| **Պարտավորություններ** | | |
| Ավանդներ բանկերից | 3,302,968 | 1,738,021 |
| Ընթացիկ հաշիվներ եւ ավանդներ հաճախորդներից | 6,379,809 | 2,556,912 |
| Մուրհակներ | 62,955 | 16,837 |
| | 9,745,732 | 4,311,770 |
| Հաշվարկված տոկոսներ եւ այլ պարտավորություններ | 209,768 | 120,580 |
| Ընդամենը պարտավորություններ | 9,955,500 | 4,432,350 |
| **Բաժնետիրական կապիտալ** | | |
| Բաժնետիրական կապիտալ եւ պահուստներ | 1,066,047 | 795,926 |
| **Ընդամենը պարտավորություններ եւ բաժնետիրական կապիտալ** | 11,021,547 | 5,228,276 |

### ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Եկամուտների եւ ծախսերի հաշվետվություն**
*1999 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար*

| | 1999 թ. հազ. դրամ | 1998 թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Տոկոսներ եւ նմանատիպ եկամուտներ | 1,348,508 | 568,775 |
| Տոկոսային ծախսեր | (644,831) | (136,873) |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | 703,677 | 431,902 |
| Եկամուտ միջնորդավճարների գծով | 196,430 | 135,653 |
| Ծախս միջնորդավճարների գծով | (65,874) | (53,794) |
| Զուտ շահույթ արտարժութային գործառնություններից | 171,989 | 316,060 |
| Շահույթ հանած արժեթղթերի ներդրումից ստացված վնասը | 22,022 | (40,978) |
| Այլ գործառնական եկամուտ | 18,769 | 2,027 |
| **Ոչ տոկոսային եկամուտ** | 343,336 | 358,968 |
| Ընդհանուր վարչական ծախսեր | (401,163) | (355,645) |
| Այլ գործառնական ծախսեր | (50,851) | (37,054) |
| Շահույթը մինչեւ հատկացումները վարկերի հնարավոր կորուստների պահուստաֆոնդին եւ հարկումը | 594,999 | 398,171 |
| Հատկացումներ հնարավոր կորուստների պահուստաֆոնդերին | (188,474) | (71,044) |
| **Շահույթը մինչեւ հարկումը** | 406,525 | 327,127 |
| Հարկեր | (124,986) | (76,521) |
| **Շահույթը հարկումից հետո** | 281,539 | 250,606 |
| Շահաբաժիններ | (11,418) | (9,074) |
| **Տարվա զուտ շահույթը** | 270,121 | 241,532 |

### Դրամական հոսքերի հաշվետվություն
*1999 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ*

| | 1999 թ. հազ. դրամ | 1998 թ. հազ. դրամ |
|---|---|---|
| *Գործառնական շահույթի եւ գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական հոսքի համեմատագրումը* | | |
| **Շահույթ մինչեւ հարկումը** | 406,525 | 327,127 |
| Պահուստավորումներ տոկոսների գծով | 108,177 | - |
| Պահուստավորումներ անհուսալի պարտքերի գծով | 188,474 | 71,044 |
| Մաշվածություն | 70,130 | 36,111 |
| Հիմնական միջոցների վաճառքից ստացված վնաս | 66 | 728 |
| *Գործառնական շահույթ մինչեւ գործառնական ակտիվներում եւ պարտավորություններում փոփոխությունները* | 773,372 | 435,010 |
| **Դրամական միջոցների զուտ ներհոսք գործառնական գործունեությունից** | | |
| Հաճախորդներին եւ բանկերին տրամադրված վարկերի աճ | (2,762,256) | (672,950) |
| Հաշվարկված տոկոսների եւ այլ ակտիվների աճ | (184,933) | (101,704) |
| Այլ բանկերից ստացված ավանդների աճ | 1,564,947 | 1,400,408 |
| Հաճախորդներին վճարվելիք գումարների աճ | 3,822,897 | 896,365 |
| Հաշվարկված տոկոսների եւ այլ պարտավորությունների աճ | 49,940 | 88,898 |
| Վճարված հարկեր | (75,072) | (89,305) |
| | 2,415,523 | 1,521,712 |
| **Դրամական միջոցների զուտ արտահոսք ներդրումային գործունեությունից** | | |
| Հիմնական միջոցների ձեռք բերում | (81,656) | (46,229) |
| Հիմնական միջոցների վաճառքից ստացված հասույթ | 1,702 | - |
| Արժեթղթերի զուտ վաճառք/(ձեռք բերում) | 795 | (667,370) |
| | (79,159) | (713,599) |
| **Դրամական միջոցների զուտ ներհոսք ֆինանսական գործունեությունից** | | |
| Թողարկված մուրհակներ | 46,118 | 16,837 |
| Վճարված շահաբաժիններ | (8,303) | (1,091) |
| | 37,815 | 15,746 |
| **Դրամական միջոցների եւ դրանց համարժեք միջոցների զուտ աճ** | 3,147,551 | 1,258,869 |
| Դրամական միջոցները եւ դրանց համարժեք միջոցները առ 1 հունվարի 1999 թ. | 2,888,369 | 1,629,500 |
| **Դրամական միջոցները եւ դրանց համարժեք միջոցները առ 31 դեկտեմբերի 1999 թ.** | 6,035,920 | 2,888,369 |

### Փոփոխություններ զուտ կապիտալում
*1999 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար*

| | Բաժնետիրական կապիտալ հազ. դրամ | Նախորդ ժամանակաշրջ. չբաշխված պահուստներ հազ. դրամ |
|---|---|---|
| Առ 31 դեկտեմբերի 1998 թ. | 66,733 | 473,610 |
| Ժամանակահատվածի զուտ շահույթ | - | 270,121 |
| Առ 31 դեկտեմբերի 1999 թ. | 66,733 | 743,731 |

